ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հրանտ Դինք հիմնարկը, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի շրջանակներում 2026 թ. օգոստոսից 2027 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում կշարունակի աջակցել Հայաստանից և Թուրքիայից առնվազն 50 անհատի և շահույթ չհետապնդող քաղաքացիական նախաձեռնությունների՝ հոգալով նրանց միջազգային և միջքաղաքային ճանապարհածախսը՝ տարբեր թեմատիկ ոլորտներում աշխատանքներ և ուսումնասիրություններ կատարելու նպատակով հարևան երկիր այցելելու համար:

Ընդհանուր տեղեկատվություն

1. Հրանտ Դինք հիմնարկը 2014 թ. փետրվարին նախաձեռնեց Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին» ծրագրի շրջանակում՝ նպատակ ունենալով ավելացնելու ուղիղ կապերը և խթանելու համագործակցությունը երկու հարևան երկրների մարդկանց միջև: Եվրոպական միության ֆինանսական աջակցության շնորհիվ Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը հայտարարել է հայտերի ընդունման 5 փուլ 2014 թ. մարտից մինչև 2015 թ. մայիսը, որի արդյունքում ստացել է 850 հայտադիմում և ճանապարհորդական դրամաշնորհային աջակցություն տրամադրել 210 անհատի:

2. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը շարունակեց հայտերի ընդունումը՝ հայտարարելով 6-րդ փուլը, որը համատեղ իրականացվում էր Հրանտ Դինք հիմնարկի և Հայաստանում գործող Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) ՀԿ-ի կողմից՝ Անկարայում և Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունների համատեղ ֆինանսական օժանդակությամբ: 6-րդ փուլում Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը ստացել է ավելի քան 160 հայտադիմում և ճանապարհորդական դրամաշնորհային աջակցություն տրամադրել 26 անհատի՝ 2015 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում:

3. 2016-2017 թթ. Հրանտ Դինք հիմնարկը Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհին իրականացրել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. 2-րդ փուլ» ծրագրի շրջանակներում՝ համագործակցելով Հայաստանում գործող Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի (ԵՆԿ) հետ: 2016 թ. հուլիսից մինչև 2017 թ. սեպտեմբեր Ճանապարհորդական դրամաշնորհը հայտարարել է հայտերի ընդունման 6 փուլ (7-12-րդ փուլեր)՝ ստանալով շուրջ 600 հայտադիմում և ճանապարհորդական դրամաշնորհային աջակցություն տրամադրելով 186 անհատի:

4. 2017-2019 թթ. Հրանտ Դինք հիմնարկը, համագործակցելով Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) ՀԿ-ի հետ, իրականացրել է Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության Հակամարտությունների, կայունության և անվտանգության հիմնադրամի ֆինանսական աջակցության շնորհիվ: 2017 թ. հոկտեմբերից 2018 թ. նոյեմբեր ամիսների ընթացքում Ճանապարհորդական դրամաշնորհը հայտարարել է հայտերի ընդունման 5 փուլ (13-17-րդ փուլեր)՝ ստանալով 450 հայտադիմում և ճանապարհորդական դրամաշնորհային աջակցություն տրամադրելով 129 անհատի:
5. 2020-2021 թթ. Հրանտ Դինք հիմնարկը պատրաստվում էր Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի հայտերի ընդունմանը Եվրոպական միության «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. 3-րդ փուլ» ծրագրի շրջանակներում, սակայն Քովիդ 19-ի համավարակով և 2020 թ. երկրորդ կեսին Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի պատճառով հայտերի ընդունման գործընթացը հետաձգվեց մինչև 2023 թ.:
6. 2023-2024 թթ. Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացին. հրատապ հասցեագրում» ծրագրի շրջանակներում Հրանտ Դինք հիմնարկի կողմից իրականացվող Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը հայտարարեց հայտերի ընդունման ընդհանուր 9 փուլ և երկու երկրներից ստացավ 242 հայտադիմում: Ծրագրի շրջանակներում աջակցություն ստացավ 69 անհատ՝ 26-ը Հայաստանից և 43-ը Թուրքիայից, որոնք հստակ նպատակով և ծրագրով ճանապարհորդեցին հարևան երկիր: Ճանապարհորդական դրամաշնորհ ստացած անհատների թիվը 11-ով գերազանցում էր նախապես սահմանված թիրախը:

Ովքե՞ր կարող են օգտվել Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհից:

7. Ցանկացած անհատ, ով Հայաստանի կամ Թուրքիայի քաղաքացի է, կամ ունի կացության իրավունք Հայաստանում կամ Թուրքիայում, ինչպես նաև Հայաստանում և Թուրքիայում գործող/գրանցված ցանկացած շահույթ չհետապնդող խումբ, նախաձեռնություն և կազմակերպություն կարող է օգտվել Ճանապարհորդական դրամաշնորհից: Իրավաբանական գրանցում չունեցող խմբերն ու նախաձեռնությունները նույնպես կարող են դիմել Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի աջակցությանը:

   ա) Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի առաջնային նպատակն է աջակցել երիտասարդական նախաձեռնություններին, ուսանողներին, բուհական ակումբներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, մասնագիտական կազմակերպություններին, ավագ դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին, գիտնականներին, հետազոտողներին, լրագրողներին, հրատարակիչներին, նկարիչներին, սպորտային ակումբներին, մարզիկներին, գործարար հաստատություններին և տեղական իշխանություններին՝ համապատասխան ոլորտում և

գործունեության համապատասխան շրջանակներում հարևան երկիր ճանապարհորդելու համար։

բ) Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը կաջակցի համապատասխան գործողությունների իրականացմանը բազմաբնույթ թեմատիկ ոլորտներում, ինչպիսիք են քաղաքացիական հասարակությունը, երիտասարդության և կամավորության վերաբերյալ քաղաքականությունները, մարդու իրավունքները և ժողովրդավարությունը, կրթությունը և ուսուցումը, շրջակա միջավայրը, պատմությունը, մշակույթն ու արվեստը, զարգացումը, գենդերը, բժշկությունը, իրավաբանությունը, տեխնոլոգիաները, սպորտը, տարածաշրջանային համագործակցությունը, եվրոպական ինտեգրացիան և այլն։

գ) Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը կաջակցի անհատների և խմբերի, ովքեր կազմակերպում կամ մասնակցում են տարբեր տեսակի գործողությունների, ինչպիսիք են գործընկերության հիմնումը և ցանցային համագործակցությունը, ծրագրային պլանավորման այցերը, միջսահմանային ծրագրերը, ծրագրերի նախապատրաստական հանդիպումները, փոխանակման ծրագրերը, դասընթացները, լեզվի ուսուցումը, գիտական համագործակցությունը, հետազոտություններ անցկացնելը և թեկնածուական աշխատանքները, քաղաքացիական հասարակության կազմակերպություններում կամավորական աշխատանքը, համատեղ ստեղծագործական աշխատանքները, ինչպես նաև վերոնշյալ թեմատիկ ոլորտներում քննարկումների, համաժողովների, սեմինարների, ցուցահանդեսների, համերգների և նմանատիպ միջոցառումների կազմակերպումը կամ մասնակցությունը։

8. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհ ստանալու համար չկա տարիքային սահմանափակում։ 18 տարին չլրացած անձիք (իրավական չափահասության տարիքը Հայաստանում և Թուրքիայում) պետք է հայտին կից ներկայացնեն ծնողների, օրինական խնամակալների կամ ուսուցիչների թույլտվությունը։ Հարևան երկիր այցի ժամանակ նրանց պետք է ուղեկցի 18 տարին լրացած չափահաս անձ։

Ովքե՞ր չեն կարող օգտվել Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհից։

9. Շահույթ հետապնդող կազմակերպութունների, առևտրային ձեռնարկությունների, գործարար հաստատությունների ճանապարհորդությունները, որոնց նպատակը ապրանքների և ծառայությունների վաճառքն է, քաղաքական կուսակցությունների ճամփորդությունները, տուրիստական և անձնական այցերը, ինչպես նաև բուժման նպատակով կատարվող այցերը թույտատրելի չեն։

10. Հրանտ Դինք հիմնարկի, ինչպես նաև գործընկեր կազմակերպության՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» (ԵՆԿ) ՀԿ-ի ներկայիս և նախկին

աշխատակիցների, անդամների և խորհրդի անդամների, ինչպես նաև «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի կոնսորցիումի անդամների այցելությունները և/կամ վերոնշյալ կազմակերպությունների գործունեության շրջանակում կատարվող ճանապարհորդությունները թույլատրելի չեն։ Սույն դրույթի շրջանակում «ԵՆԿ անդամներ» հասկացությունը վերաբերում է բացառապես այն անձանց, որոնք կազմակերպությունում ունեն ֆինանսական վարձատրություն կամ որոշում կայացնելու լիազորություն։ Ընդհանուր անդամակցությունը խոչընդոտ չի հանդիսանում Ճանապարհորդական դրամաշնորհին դիմելու համար։

11. Անհատները, ովքեր նախկինում ստացել են աջակցություն Հրանտ Դինք հիմնարկի կողմից՝ Հայաստան կամ Թուրքիա այցելելու համար, չեն կարող օգտվել Ճանապարհորդական դրամաշնորհից։

12. Այն անհատները, որոնք արդեն ստացել են աջակցություն Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի նախորդ փուլերում, չեն կարող կրկին օգտվել Ճանապարհորդական դրամաշնորհից։ Անհատները, որոնք նախորդ փուլերում ստացել են ճանապարհդական դրամաշնորհ, սակայն չեն կարողացել իրականացնել իրենց ճանապարհորդությունը արտակարգ իրավիճակների պատճառով, կարող են կրկին դիմել՝ ուղարկելով նախկին հայտադիմումը կամ նորը։

13. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհից հնարավոր է օգտվել միայն մեկ անգամ։ Ճանապարհորդական դրամաշնորհը չստանալու դեպքում նույն անձը կարող է դիմել հաջորդ փուլերին՝ այլ հայտադիմումով։

14. Հայտադիմումը պետք է ներկայացվի անհատների կողմից։ Խմբային ճանապարհորդությունների դեպքում խմբի յուրաքանչյուր անդամ պետք է ներկայացնի անհատական հայտադիմում՝ հայտի համապատասխան բաժնում մանրամասնելով խմբի մասին տեղեկատվությունը։ Խմբային հայտերի դեպքում խմբի մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 3 (երեք) անձը, և յուրաքանչյուր մասնակցի դերը պետք է հստակ ներկայացվի համապատասխան հայտադիմումում։

Ի՞նչ ծախսեր է հոգում Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը։

15. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը հոգում է ճանապարհածախսը, որի համար հարկավոր է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր (ինքնաթիռի, գնացքի, ավտոբուսի տոմսեր)։ Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը կհոգա միայն էկոնոմ դասի տոմսերի և հասարակական տրանսպորտի ծախսերը։

16. Ճանապարհորդության ընթացքում տեղական և միջազգային տրանսպորտային ծախսերը, որոնք բխում են ծրագրի նպատակներից, կվճարվեն Հրանտ Դինք հիմնարկի կողմից ուղիղ համապատասխան ավիաընկերությանը կամ ճանապարհորդական գործակալությանը: Ճանապարհորդական դրամաշնորհառուների տոմսերը կտրամադրվեն Հրանտ Դինք հիմնարկի կողմից:

17. Այն դեպքերում, երբ հնարավոր չէ Հրանտ Դինք հիմնարկի կողմից անմիջականորեն ամրագրել և վճարել տոմսերի, մասնավորապես՝ միջքաղաքային տրանսպորտի համար, ինչպիսիք են օրինակ Երևան-Գյումրի և Երևան-Թբիլիսի ուղևորությունները, ճանապարհորդական դրամաշնորհառուն կարող է ինքնուրույն վճարել այդ ծախսերը: Նման դեպքերում ճանապարհորդական դրամաշնորհառուն կարող է փոխհատուցում պահանջել Հրանտ Դինք հիմնարկից: Փոխհատուցում ստանալու համար պետք է բավարարել հետևյալ պահանջները.

    ա) Միջքաղաքային ճանապարհորդությունը պետք է իրականացվի էկոնոմ դասի հասարակական տրանսպորտով:

    բ) Բոլոր իրավական փաստաթղթերը, անդորրագրերն ու ստացականները, որոնք վկայում են կատարած միջքաղաքային ճանապարհորդության մասին, ինչպես նաև ճանապարհորդական դրամաշնորհի շրջանակներում գործունեության հաշվետվությունը դրամաշնորհառուն պետք է ներկայացնի Հրանտ Դինք հիմնարկին՝ հայրենիք վերադառնալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

18. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը չի ֆինանսավորում վիզայի ծախսերը, ելքի վճարներն ու տուրքերը, ճանապարհորդական ապահովագրությունը կամ այցի հետ կապված այլ ծախսեր՝ ներառյալ կացարանը, սնունդը և այլն: Այս ծախսերը հոգում է Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի շահառուն ինքը կամ հրավիրող անձը և/կամ կազմակերպությունը:

19. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի աջակցությամբ Հայաստան կամ Թուրքիա մեկնող անձանց խորհուրդ է տրվում ձեռք բերել ճանապարհորդական ապահովագրություն, որը կգործի ճամփորդության ողջ տևողության ընթացքում: Ճամփորդական առողջության ապահովագրության կազմակերպման միակ պատասխանատվությունը ստանձնում է դրամաշնորհառուն: Հրանտ Դինք հիմնարկը, «Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը. միջսահմանային կապերի ամրապնդում» ծրագրի կոնսորցիումի անդամներն ու Եվրոպական միությունը պատասխանատվություն չեն կրում այցելության ընթացքում տեղի ունեցող որևէ միջադեպի դեպքում:

Ընտրության չափանիշները

20. Ընտրության հիմնական չափանիշը նպաստելն է ծրագրի ընդհանուր նպատակի իրականացմանը, որն է՝

«Աջակցել քաղաքացիական հասարակության ջանքերին՝ ուղղված Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանն ու փակ սահմանների բացմանը՝ մարդկային կապերը զարգացնելու, տնտեսական ու գործարար կապերն ընդլայնելու, մշակութային և կրթական ծրագրեր իրականացնելու, ինչպես նաև երկու հասարակություններում համաչափ տեղեկատվություն ապահովելու միջոցով»։

Ընտրության առաջնայնությունները

21. Ընտրության հիմնական չափանիշից բացի՝ առաջնահերթություն կտրվեն հետևյալ հատկանիշներին համապատասխանող հայտերին.

ա) Աջակցություն առաջին անգամ մեկնողներին. առաջնահերթություն կտրվի այն անհատներին, ովքեր առաջին անգամ են ճանապարհորդում հարևան երկիր։

բ) Աջակցություն տեղական և շրջանային գործունեության համար. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի նպատակն է մոբիլիզացնել անհատներին և կազմակերպություններին ոչ միայն խոշոր քաղաքներից, այլ նաև գյուղական վայրերից։ Այդ պատճառով առաջնահերթությունը տրվելու է Ստամբուլից և Երևանից բացի այլ քաղաքներում տեղային գործունեություն ծավալելու նպատակով իրականացվող ճանապարհորդություններին։

գ) Բազմազանություն. կապահովվի սեռի, տարիքի, աշխարհագրական տարածքի, թեմատիկ ոլորտի և գործունեության տեսակների առումով շահառուների բազմազանությունը։

դ) Աջակություն երիտասարդությանը. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհին կարող են դիմել բոլոր տարիքային խմբերը, սակայն առաջնահերթություն կտրվի երիտասարդներին՝ ներառյալ ավագ դպրոցի աշակերտներին, բուհի ուսանողներին և երիտասարդական խմբերին։

ե) Աջակցություն նոր նախաձեռնություններին. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը կաջակցի որոշակի ոլորտներում մասնագիտացած, իրավական գրանցում ունեցող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, ինչպես նաև իրավական կարգավիճակ չունեցող նախաձեռնություններին։ Առաջնահերթություն կտրվի նորարարական գաղափարներ ներկայացրած քաղաքացիական նախաձեռնություններին և անհատներին։

զ) Կայունություն և բազմարկման ազդեցություն. առաջնահերթություն կտրվի այն ճանապարհորդություններին, որոնք ավելի շատ մարդկանց կարող են ընդգրկել և ավելի

մեծ ազդեցություն կարող են ունենալ երկարաժամկետ հեռանկարում՝ նպաստելով Թուրքիայի և Հայաստանի միջև հստակ գործընկերային ծրագրերին։

Ընտրության գործընթացը

22. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհին ներկայացված բոլոր հայտերը գնահատվում են ընտրող հանձնաժողովի կողմից՝ ընտրության չափանիշներին և առաջնահերթություններին համապատասխան։ Ընտրող հանձնաժողովը կազմված է անկախ, չեզոք և փորձառու վեց անդամից՝ երեքը Թուրքիայից, երեքը՝ Հայաստանից։ Հանձնաժողովի անդամների ընտրությունը կատարվում է Հրանտ Դինք հիմնարկի կողմից։ Ընտրող հանձնաժողովի կազմը ձևավորելիս ուշադրություն է դարձվում գենդերային հավասարությանը։ Ընտրող հանձնաժողովի անդամները իրենց գործառույթներն իրականացնում են կամավոր հիմունքով։

23. Ընտրող հանձնաժողովի անդամները կգնահատեն Հայաստանից և Թուրքիայից ստացած բոլոր հայտերը՝ 10 բալային համակարգով։ Միջինից բարձր միավոր հավաքած դիմումները կստանան ճանապարհորդական դրամաշնորհ։ Գնահատումը կատարվում է միասնական կարգով, այլ ոչ՝ Հայաստանից և Թուրքիայից ստացած հայտերի առանձին գնահատմամբ։

24. Ընտրող հանձնաժողովի անդամները վետոյի իրավունք ունեն։ Ընտրող հանձնաժողովի անդամները կգնահատեն ընտրության ժամանակացույցում մատնանշված յուրաքանչյուր ժամանակահատվածի համար ստացած հայտերը յոթ (7) օրվա ընթացքում։

25. 2026-2027 թթ. ընտրող հանձնաժողովի անդամներն են Բուրջու Բեջերմենը, Դիքրան Ալթունը, Էվրեն Էրգեչը, Գայանե Մկրտչյանը, Գեղամ Վարդանյանը և Մարինե Կարոյանը։

Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի ընտրության ժամանակացույց

26. 2026 թ. սեպտեմբերից մինչև 2027 թ. հուլիս Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհից օգտվելու ցանկություն ունեցող անհատները կարող են ներկայացնել իրենց հայտերը ցանկացած ժամանակ՝ 2026 թ. հունիսից մինչև 2027 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում։ Հայտերի գնահատումը և արդյունքների հայտարարումը տեղի կունենա ըստ ստորև ներկայացված ժամանակացույցի։ Ընտրող հանձնաժողովը դրամաշնորհառուների վերաբերյալ իր որոշումները կայացնում է 5 փուլով՝ ստորև ներկայացված ընտրության ժամանակացույցում նշված կոնկրետ ժամկետներում։

27. Հայտատուները պետք է կազմակերպեն իրենց ճանապարհորդությունը՝ համաձայն ներքոնշյալ ճանապարհորդական ժամանակացույցի, և հայտեր ներկայացնեն համապատասխան փուլի համար։ Հետևաբար հայտը ներկայացնելիս/լրացնելիս հայտատուները կարող են ընտրել ճանապարհորդության միայն այն ժամկետները, որոնք համապատասխանում են տվյալ փուլին։ Ճանապարհորդությունը կարող է տևել ավելի

երկար, քան յուրաքանչյուր փուլի համար նշված ժամանակահատվածը՝ երկարաժամկետ ծրագրերի կամ պատշաճ կերպով արդարացված լինելու դեպքում:

Ընտրության ժամանակացույց

Հայտերի ընդունման փուլեր	Հայտերի ընդունման ժամանակահատված	Ընտրված դրամաշնորհառուների հայտարարում	Ճանապարհորդության թույլատրելի ժամանակացույց
27	15 հունիս - 31 հուլիս 2026	15 օգոստոս 2026	25 օգոստոս - 30 նոյեմբեր 2026
28	1 օգոստոս - 30 սեպտեմբեր 2026	15 հոկտեմբեր 2026	25 հոկտեմբեր - 31 հունվար 2026
29	1 հոկտեմբեր - 30 նոյեմբեր 2026	15 դեկտեմբեր 2026	25 դեկտեմբեր - 31 մարտ 2027
30	1 դեկտեմբեր 2026 - 31 հունվար 2027	15 փետրվար 2027	25 փետրվար - 31 մայիս 2027
31	1 փետրվար - 31 մարտ 2027	15 ապրիլ 2027	25 ապրիլ - 31 հուլիս 2027

28. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհը կաջակցի միայն 2026 թ. օգոստոսի 25-ից մինչև 2027 թ. հուլիսի 31-ն իրականացվող ճանապարհորդությունները: 2027 թ. հուլիսի 31-ից հետո իրականացվող այցերի դեպքում ճանապարհորդական դրամաշնորհի աջակցություն չի կարող տրամադրվել:

Հայտերի ներկայացման գործընթացը

29. Ցանկացած հայտատու, ով ցանկանում է օգտվել Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհից, պետք է լրացնի առցանց հայտադիմումը, որը տեղակայված է www.hrantdink.org կայքում: Հայտերը պետք է լրացնել անգլերենով, սակայն անգլերենի իմացությունը ընտրության չափանիշ չի հանդիսանում: Հայտերը անգլերենով լրացնելը նպատակ ունի կանխել հնարավոր տարաձայնությունները թարգմանության վերաբերյալ և հեշտացնել ընտրող հանձնաժողովի աշխատանքը: Եթե հայտատուները հայերենից/թուրքերենից անգլերեն թարգմանության աջակցության կարիք ունեն, կարող են դիմել Հրանտ Դինք հիմնարկի ծրագրային թիմի աշխատակիցներին՝ խորհրդատվության համար:

30. Հայտատուները պարտավոր են նշել առնվազն մեկ կոնտակտային/երաշխավորող անձ և/կամ կազմակերպություն հարևան երկրում, որը կապ ունի առաջարկվող ճանապարհորդության նպատակի հետ և ծանոթ է հայտատուի նախատեսվող գործողություններին: Խնդրում ենք նկատի ունենալ, որ ծրագրային թիմը կապ կհաստատի հայտադիմումում հայտատուի կողմից նշված կոնտակտային/երաշխավորող անձի կամ կազմակերպության հետ՝ համոզվելու համար, որ նշված անձինք/կազմակերպությունները տեղեկացված են և պատրաստ են աջակցել

հայտատուին ծրագրի ընթացքում, եթե հաստատվի վերջինիս հայտը Ճանապարհորդական դրամաշնորհ ստանալու համար։

31. Հրանտ Դինք հիմնարկի ծրագրային թիմի անդամները կհավաքեն բոլոր ներկայացված հայտերը, կիրականացնեն տեխնիկական գնահատում՝ պարզելու արդյոք հայտը ամբողջական է: Այնուհետև հայտերի ցանկը կուղարկվի ընտրող հանձնաժողովին։

32. Ընտրող հանձնաժողովի գնահատումից հետո Հայաստանից և Թուրքիայից ստացված բոլոր հայտերը դասավորվում են բալերի նվազման կարգով: Միջինից բարձր միավոր ստացած հայտատուները, որոնք կմտնեն 2026-2027 թթ. թիրախային թվաքանակի մեջ, կճանաչվեն Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի շահառու:

33. Դրամաշնորհառուներն ընտրության արդյունքներին կծանոթանան էլեկտրոնային նամակով՝ ըստ վերոնշյալ ժամանակացույցի։ Ճանապարհորդությունները կարող են սկսվել միայն շահառուների ընտրության մասին հայտնելուց հետո՝ համաձայն վերը նշված ճանապարհորդության թույլատրելի ժամանակացույցի: Դրամաշնորհ չստացած հայտատուները Հրանտ Դինք հիմնարկի կողմից կտեղեկացվեն էլեկտրոնային նամակի միջոցով։

34. Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի շահառուները պարտավոր են նախ հաստատել իրենց այցի ամսաթվերը և ճանապարհորդության ուղին ծրագրային թիմին, կնքեն Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի համաձայնագիրը Հրանտ Դինք հիմնարկի հետ և այցից ամենաուշը 5 օր առաջ Հրանտ Դինք հիմնարկին հանձնեն համաձայնագրի օրինակը։ Դրանից հետո միայն Հրանտ Դինք հիմնարկը կկատարի ճամփորդական տոմսի ամրագրումները և կուղարկի գնված տոմսերը դրամաշնորհառուներին։ Եթե շահառուները չեն հաստատում իրենց այցի ամսաթվերը և ճանապարհորդության ուղին տվյալ փուլի համար հատկացված թույլատրելի ժամանակահատվածում, ապա ծրագրային թիմը իրավունք ունի զրկել նրանց դրամաշնորհից։

35. Դրամաշնորհառուն ինքն է պատասխանատու հարևան երկիր այցելելու նպատակով մուտքի թույլտվության և դրանով նախատեսված ժամկետների և այլ պահանջների կատարման համար։ 2026 թ. սկսած՝ Թուրքիայի հատուկ անձնագրեր ունեցող քաղաքացիներից այլևս չի պահանջվում լրացուցիչ ընթացակարգ կամ հատուկ թույլտվություն՝ հարևան երկիր մուտք գործելու համար։ Այնուամենայնիվ, ճանապարհորդներին խորհուրդ է տրվում նախապես ճշտել մուտքի գործող պահանջները։

36. Այն դեպքում, երբ Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի ընտրված շահառուներն, ովքեր, ստորագրած լինելով Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի համաձայնագիրը, չեն կարող իրականացնել իրենց այցը հարևան երկիր և Հրանտ Դինք հիմնարկին չեն տեղեկացնում այդ մասին առնվազն 3 (երեք) օր առաջ, Հիմնարկն անհրաժեշտ քայլեր կձեռնարկի այցի համար ծախսված միջոցները վերականգնելու համար՝ Հայաստան-Թուրքիա ճանապարհորդական դրամաշնորհի համաձայնագրի կետերին համաձայն։

37. Այն դեպքում, երբ Հրանտ Դինք հիմնարկի ծրագրային թիմը բացահայտի հայտատուի կողմից ներկայացված թերի կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություն, Հիմնարկին իրավունք է վերապահվում կասեցնել հայտադիմումը ընտրության գործընթացի ցանկացած փուլում, ներառյալ այն դեպքերը, երբ հայտատուի անունը հայտարարվել է որպես դրամաշնորհառու։